600.0232.01.07.14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հուլիսի 2014 թվականի № 232Ա
քաղ. Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» № 359Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

1) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝
   ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 4.772 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 5.726 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,
   բ. հզորության ամսական վճարը՝ 4156.78 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 4988.14 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

2) «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝
   ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 30.771 դրամ/կՎտժ՝առանց ավելացված արժեքի հարկի և 36.925 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,
   բ. հզորության ամսական վճարը՝ 862.67 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1035.2 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 30.771 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 36.925 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

3) «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 15.111 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 18.133 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 5399.12 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 6478.94 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

4) «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 6.648 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 7.978 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 250.31 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 300.37 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

5) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 1.727 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 2.072 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 654.47 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 785.36 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

6) «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արտադրող «Հրազդան-5» կայանից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 33.4 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 40.08 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

7) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը (հաղորդման ցանց մուտք գործած էլեկտրաէներգիայի քանակի համար)՝ 1.3644 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.6373 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված

յուրաքանչյուր կՎտժ -ի համար՝ 1.3644 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.6373 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

8) «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը՝ 105.0935 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 126.1122 միլիոն դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար՝ 0.1941 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.2329 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

9) «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը՝ 13.4301 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 16.1161 միլիոն դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար՝ 0.0248 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.0298 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7 -ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների մասին» № 191Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի օգոստոսի 1 -ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
1 հուլիսի 2014թ.